«Ալմաստ» ԲԲԸ

Հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Ռուբինյանց 28, հեռ.՝ (+37410) 24-35-20,
էլեկտրոնային հասցե՝ account@almastcompany.com

Հաշվետվություն թիվ 1
«03» ապրիլի 2020 թվական

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 127-րդ հոդվածը, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի 50-րդ կետի «ժե» ենթակետը, 24-րդ գլուխը, կից ներկայացնում ենք «Ալմաստ» ԲԲԸ-ի էական փաստերը և տեղեկությունները:

Առդիր՝ 1 թերթ:

«Ալմաստ» ԲԲԸ

Հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Ռուբինյանց 28, հեռ.՝ (+37410) 24-35-20,
էլեկտրոնային հասցե՝ account@almastcompany.com

Էական փաստեր և տեղեկություններ

«Ալմաստ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) տեղեկացնում է, որ Ալմաստ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվելու է 2020 թվականի ապրիլի 28-ին, ժ. 12:00, իր գտնվելու վայրում՝ ք.Երևան, Ռուբինյանց փողոց, թիվ 28 հասցեում:

«Ալմաստ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգում հետևյալ հարցերն են.

1. «Ալմաստ» ԲԲԸ տարեկան ժողովի հաշվիչ հանձնաժողովի քանակական կազմի հաստատում, անդամների ընտրություն և հաստատում,
2. «Ալմաստ» ԲԲԸ կառավարող կազմակերպություն՝ «Արինս Գրուպ» ՍՊԸ-ի զեկույց 2019 թվականի ընթացիկ գործունեության վերաբերյալ,
3. «Ալմաստ» ԲԲԸ 2019թ. գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ վերստուգողի եզրակացության ներկայացում,
4. «Ալմաստ» ԲԲԸ 2019թ. գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ անկախ աուդիրորոկան եզրակացության ներկայացում,
5. «Ալմաստ» ԲԲԸ 2019թ. գործունեության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատում, տարեկան շահութաբաժինների վճարման (չվճարման) մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատում,
6. «Ալմաստ» ԲԲԸ տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատում, դրա անդամների ընտրություն և հաստատում, վարձատրության պայմանների որոշում,
7. «Ալմաստ» ԲԲԸ վերստուգողի ընտրություն:

«Ալմաստ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվելու է 2020 թվականի ապրիլի 3-ի դրությամբ:

«Ալմաստ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով, իսկ լիազորված անձ լինելու դեպքում՝ նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Ալմաստ» ԲԲԸ բաժնետիրոջ կողմից տրված լիազորագրով:

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր Ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին կտրամադրվեն տարեկան ֆինանսական հաշվետվությունները, անկախ աուդիտորական եզրակացությունը, վերստուգողի եզրակացյությունը, տեղեկություններ Խորհրդի անդամների և վերստուգողի թեկնածուների վերաբերյալ և այլ անհրաժեշտ նյութերը: Օրակարգում ընդգրկված հարցի հետ կապված փաստաթղթերին և նյութերին ծանոթանալու համար կարող եք դիմել ք.Երևան, Ռուբինյանց փողոց, թիվ 28 հասցեով: